



Լրատու Newsletter

ԳԵՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ
K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Յուլիս 2020
Լրատու թիվ 19

Ողջոյնի Խօսք

ԱՆԻ

Յուլիսի 5-ին գեղեցիկ առցանց հանդեսով, եզրափակուեց 2019-2020 ուսումնական տարին:

Այս տարի շատ իրայատուկ տարի էր այս թագակիր համավարակը մեր կեանքի ռիթմը մի քիչ փոխեց, հատկապես երկրորդ եռամսեակի վերջին 3 կիրակիները և ամբողջ երրորդ եռամսեակը:

ՎԱՆ

Մարտի 15-ից թագակիր (coronaviruse) համավարակի պատճառով դպրոցում դադարեցրինք դասերը և դասաւանդման գործընթացը տեղափոխեցինք հեռավար ուսուցման հարթակ:

Առաջին երկու կիրակիները դասաւանդումն արւեց հեռախօսով, Skype-ով կամ WhatsApp-ով: Սակայն երրորդ կիրակին և ամբողջ երրորդ եռամսեակը մեր ուսուցչուհիները բաւականին հեշտութեամբ սկսեցին դասերն անցկացնել օգտւելով ZOOM համակարգի հարթակը, որից թէ՛ աշակերտներն ու ծնողները և թէ՛ ուսուցչուհիները շատ գոհ էին:

Համավարակի պատճառով, ցաւօք մեր այս տարւայ շրջանաւարտները չկարողացան յանձնել աւարտական քննութիւնները և քանի որ աւարտական հանդէսն առցանց էր հեռավար, աւարտական վկայականները նոյնպէս չստացան, սակայն վկայականները կը յանձնենք երբ դպրոցը վերաբացի:

Մայիսի 10-ին հեռավար հարթակում մենք տօնեցինք Յաղթանակի օրը, որին մասնակցեցին նախակրթարանից մինչև 9-րդ դասարանների աշակերտները իրենց գեղեցիկ կատարումներով:

Մայիսի 31-ին Վարժարանում հեռավար տօնեցինք Սարգսաւապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի և առաջին հանրապետութեան հռչակման 102-րդ տարեդարձը: Յունիսի 21-ին տօնեցինք հայրերի օրը և մանկապարտեզի ու նախակրթարանի աշակերտների ամավերջի հանդէսը: Մանկապարտեզի ու նախակրթարանի աշակերտներն իրենց գեղեցիկ ելոյթներով շնորհաւորեցին հայրիկներին:

Ամավերջին հանդէսը նւիրած էր մեր հայրենիքին, Հայաստանին:

Առաջինից մինչև 7-րդ դասարանների աշակերտները ներկայացրին Ա Իսահակեանի «Ազգային երգը» ստեղծագործութիւնը: Արևմտահայերէն բաժնի աշակերտները ներկայացրին փոքրիկ պատմութիւն մեր իրավիճակի մասին, աւարտական դասարանի աշակերտները՝ Եղիշէ Զարենցի <<Ես իմ անուշ Հայաստանին>> ստեղծագործութիւնը: 2019-20 ուսումնական տարին յաջողութեամբ աւարտելու առթիւ վարժարանին շնորհաւորեցին Բրիտանահայ Համայնքային խորհրդի կողմից Պրն Հրաչ Գոյումճեանը Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպանութեան գործերի հաւատարմատար Պրն Գագիկ Կիրակոսեանը, Մեծ Բրիտանիայի Հոգևոր առաջնորդ՝ Սրբազան Հայր Յովակիմ Մանուկեանը:

Այս համարում Դուք կը ծանօթանաք 2019-2020 ուսումնական տարւայ երրորդ եռամսեակի ընթացքում կատարւած աշխատանքներին: Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել այս ամսագրի պատասխանատուներին՝ տիկին Լենա Գիւլիսանճեանին էջադրման համար, և բոլոր ուսուցչուհիներին ովքեր ներկայացրին երրորդ եռամսեակում իրենց կատարւած որոշ աշխատանքները:

Օգտւելով առիթից ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել մեր սիրելի ուսուցչուհիներին, ովքեր կարողացան այս դժարին պայմաններում շարունակել դասընթացները, շնորհակալութիւն հոգաբարձուներին ովքեր կարողացան կազմակերպել վարժարանի աշխատանքները:

Գ Թահթեան Կիրակոսեայ Ազգային վարժարանի կողմից խորին շնորհակալութիւն եմ յայտնում դպրոցի բոլոր բարերարներին, կրթական և ծնողական յանձնախմբերի անդամներին:

Մաղթում եմ բոլորիդ քաջառողջութիւն, ամառային ապաւիտ հանգիստ և բարձր տրամադրութիւն, սիրով սպասում ենք բոլորիդ նոր ուսումնական տարւում:

Ռ Թաթուլեան
Տնօրինուհի


Վերամուտ՝
Սեպտեմբերի 13,
2020



Մանկապարտեզ

Այս կիսամյակ համավարակի պատճառով մանկապարտեզի դասերը, թեպետ եղել են առցանց, բայց շատ հետաքրքիր են անցել: Երեխաները սովորել են բազում թեմաներից՝

Ձեռքի մատներ



Մրգեր՝ ելակ



Այբուբեն



Երկրաչափական ձևեր՝ եռանկյուն



Ճամփորդական միջոցներ՝ ինքնաթիռ



Կենդանիներ և միջատներ՝ թիթեռ



**“Ես Գարունը շատ եմ սիրում” խորագրի տակ
ներկայացրել են՝ ՄԱՅՐԻԿԻՆ**



Ես Գարուն տեսա ամեն բույսի մեջ,
Ես Գարուն տեսա կանաչ լույսի մեջ,
Ես Գարուն տեսա մայրիկիս աչքերի
մեջ...
Գարնանը բնությունը արթնանում է,
և ամեն կողմ կանաչում է ու
գեղեցկանում...

ՄԱՅԱ Հ



Մի գանձ ունենք մեր տան մեջ,
Նրանով ենք երջանիկ,
Մեր է տալիս մեզ անշեջ
Նրա անունն է՝ ՄԱՅՐԻԿ...
Ես գարունը շատ եմ սիրում,
որովհետև Գարունը իմ մայրիկի
նման է՝ գեղեցիկ ու ջերմ...


ԴԱՎԻԹ Մ



Ես իմ մայրիկին շատ եմ սիրում:
Իմ մայրիկը ամենահամեղ
կերակուրներն է պատրաստում:
Գարունը այնքան ծաղիկ է
բերել,
Շուրջս բուրում է անուշ՝
մայրիկիս պես...

ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

**“Թանկ անուններ” խորագրի տակ երեխաները ներկայացրել են՝
Հայր, Մայր և Հայրենիք**



Ես իմ հայրիկին շատ եմ
սիրում: Իմ հայրիկը աշխարհի
ամենալավ հայրիկն է...

Հայրս բերեց ուրախություն,
Հայրական սեր ու
բարություն...

ԷՄՄԱ



Մենք հայր ենք ասում, և հետո՝
Հայրենիք,
Մենք մայր ենք ասում, և հետո՝
Մայր Հայրենիք,
Թանկ են մեզ համար Սուրբ
գանձերը մեր՝
Հայրն ու Հայրենի երկիրը,
Մայրն ու Մայր հայրենիքը և
Մայրենի լեզուն..




Մեր հայրենիքը Հայաստանն է:
Ես շատ եմ սիրում
Հայաստանը...

Հայրենիքից անուշ ու թանկ:
Ուրիշ ի՞նչ կա երկնքի տակ...

ԴԱՎԻԹ Բ.



Տիկ Անուշ շարունակուած



Իմ հայրիկը ինձ շատ է օգնում:
Ես իմ հայրիկին շատ եմ
սիրում...

Երեկոյան, երբ հայրս եկավ,
Ծաղկի անուշ բուրմունք
բերեց,
Աստղերի խինդ ու փայլ
բերեց...

ԱՐՄ



Ես իմ հայրիկին շատ եմ սիրում,
որովհետև նա իմ հերոսն է:

Ես սիրում եմ իմ հայրիկի հետ այգում
աշխատել:
Գիտեմ, որ հայրենիքը ստեղծվել է
"հայր" բառից...

ԱՀԱՐՈՆ



Ես շատ եմ սիրում
Հայաստանը:
Հայաստանի մրգերը
շատ համեղ են..

ՄԱՅԱ Մ.

Տիկ Հրանուշ և Տիկ Նուշիկ



2019 – 2020 իրայատուկ դպրոցական տարեշրջան մը եղաւ բոլորիս համար, մասնաւորապէս մեր երկու դասարաններուն որ կը բաղկանան տարբեր մակարդակ ունեցող ութ աշակերտներէ: Տարին սկսանք սովորական ձեւով եւ անդադար շարունակեցինք մեր աշխատանքը ի մտի ունենալով մեր նպատակը որ միշտ եղած է ու կը մնայ՝ աշակերտներուն սորվեցնել համարձակ եւ սահուն հայերէն խօսիլ, կարդալ ու գրել:

Մակայն, թագաժահրի համավարակի բերումով, համակերպուելով ճշտուած օրէնքներուն, ստիպուած եղանք կիրառելու այսպէս կոչուած հեռավար դասընթացներու ձեւաչափը: Ուստի՝ պարտադրուած այս պարագաներու բերումով, ստիպուած եղանք դասավանդման նոր ձեւեր ու տեղեկութիւններու նոր աղբիւրներ որոնել հայերէն տառերը եւ լեզուն հասանելի եւ սիրելի դարձնելու համար մեր սիրասուն աշակերտներուն:

Գրատախտակը փոխարինուեցաւ համակարգիչով եւ դասավանդման սովորական առարկաները՝ նոր տեսանիւթերու եւ տեսահոլովակներու տեսքով:

Այս առնչութեամբ պէտք է յիշել նաեւ ծնողներու ներդրումը դասավանդման այս նոր միջոցի յաջողութեան մէջ: Անոնց օժանդակութիւնը եւ բժախնդիր մօտեցումը խնդրին մեծապէս գնահատելի է բոլորիս կողմէ եւ խիստ կարեւոր դասընթացներու այս նոր ձեւի կիրառման մէջ տեղեկութիւնները հասանելի եւ հաճելի դարձնելու իրենց զաւակներուն:



Այս առթիւ սակայն, պէտք չէ անտեսել այն պարագան որ դասավանդութեան այս նոր ձեւակերպով աշակերտները կորսնցուցին միմիանց հետ մէկ առ մէկ շփումը: Կորսնցուցին մինչ այդ, իրենց կազմած ընկերային շրջանակը որը կարեւոր ազդակներէն մէկն է իրենց մէջ ստեղծելու եւ պահելու հայկական ոգին որը նաեւ կարեւոր նախադրեալներէն մէկն է Հայերէն լեզուն պահելու ու զարգացնելու անոնց մէջ:

Որպէս եզրափակում, պէտք է յիշել որ բոլորիս համար անսովոր այս պարագաներուն՝ ուսուցչուհիներուս, ծնողներու եւ բոլոր պատասխանատու անձանց ծրագրան աշխատանքով կարելի եղաւ հասնելու բոլորիս համար բաղձալի լաւ արդիւնքի:





Արևմտահայերէն նախակրթարանի աշակերտներու աշխատանքները





Հայկական դպրոց

Ես հինգ տարեկան եմ եւ ծնած եմ Լոնտոն, բայց իմ արմատներս հայ են:

Ես հայկական դպրոց կ'երթամ, որ հայ լեզուն սորվիմ եւ հայ ընկերներ ունենամ:

Ես սիրելի տիկին Հրանուշին դասարանն եմ եւ շատ կը սիրեմ հայկական դպրոցը, որովհետեւ կը սորվիմ հայերէն երգել, գրել ու կարդալ:



Իմ անունս Ալին Թ. է եւ ես կ'ապրիմ Լոնտոնի մէջ, ուր ծնած եմ 2013-ին: Սմէն կիրակի Հայկական դպրոց կ'երթամ հայերէն սորվելու, որովհետեւ իմ արմատներս հայ են:

Ես շատ կը սիրեմ Լոնտոն, որովհետեւ գեղեցիկ քաղաք է, բայց ամառներս կը սիրեմ անցնել Երեւան, Հայաստանի մայրաքաղաքը ուր աւելի տաք է եւ հայերով շրջապատուած եմ:



Աշակերտների կարծիքը Ներկայ Իրավիճակի Մասին

Այն ինչը, որ երևակայական հեքիաթ էր թույլ տալիս՝ իրականություն դարձավ: Անկախ մեր կամքից, բոլորս՝ ծեր, մանուկ, գործատեր, բանուոր, ուսուցիչ, աշակերտ փակվել ենք մեր տներում անորոշ ժամանակով:

Որպեսզի մեր աշակերտները չտուժեն այս բոլորից, մեր դպրոցի տնօրենուհու և հոգաբարձուների որոշումով մենք շարունակում ենք վարել մեր դասերը հեռակա թւայնացւած եղանակով:

Ելնելով այս պայմաններից, ես որոշեցի մեր դասարանի համար նախատեսւած էջը յատկացնել ներկայ իրավիճակի մասին աշակերտների արտայայտած կարծիքներին: Նրանք իրենց իսկ բառերով անկաշկանդօրէն պատասխանեցին հետեւեալ երեք հարցերին.

- 1 Այս իրավիճակի պայմաններում ի՞նչն է ձեզ դուր գալիս:
- 2 Ի՞նչը չէք սիրում:
- 3 Առաջին օրն իսկ, որ կարողանայիք տնից դուրս գալ՝ ի՞նչ կը ցանկանայիք անել, ամեն բանից առաջ:

Անահիտ



Այս իրավիճակի պայմաններում ինձ դուր է գալիս, որ ես հորս հետ հեծանիվ եմ քշում, պապիկի և տատիկի մոտ եմ մնում և տան գրքեր եմ կարդում:

Ես չեմ սիրում, որ ընկերներիս չեմ տեսնում, խաղալայր չեմ կարող գնալ և որ շատ մարդիկ են մահանում:

Առաջին օրն իսկ, որ կարողանայի տնից դուրս գալ ես շատ կցանկանայի մամայիս, քույրիկներիս և զարմիկներիս տեսնել:

Բաֆֆի



Այս իրավիճակի պայմաններում ինձ դուր է գալիս, որ քայլելու եմ գնում միասին:

Չեմ սիրում, որ դպրոց չեմ գնում:

Առաջին օրն իսկ, որ կարողանայի տնից դուրս գալ ես շատ կցանկանայի դպրոց գնալն ընտանիքիս տեսնել և մեծ մամա և մեծ պապայիս գրկել:

Ռադել



Այս իրավիճակի պայմաններում ինձ դուր է գալիս չհաճախել անգլիական դպրոց:

Չեմ սիրում, որ այս իրավիճակի պայմանները խոչընդոտ են հանդիսանում ընկերներիս հետ ֆիզիկապես շփվելու հնարավորությանը:

Առաջին օրն իսկ, որ կարողանայի տնից դուրս գալ ես շատ կցանկանայի գնալ լողի:



Աշակերտների կարծիքը Ներկայ Իրավիճակի Մասին



Սոֆի

Այս իրավիճակի պայմաններում ինձ դուր է գալիս տանը մնալը և հանգստանալը:

Չեմ սիրում ընկերներիս բացակայությունը:

Առաջին օրն իսկ, որ կարողանայի տնից դուրս գալ ես շատ կցանկանայի ծովափ գնալ:



Էրիկ

Այս իրավիճակի պայմաններում ինձ դուր է գալիս, որ դպրոց չեմ գնում:

Չեմ սիրում, որ չեմ տեսնում իմ հարազատներին:

Առաջին օրն իսկ, որ կարողանամ տնից դուրս գալ ես կգնամ Շեփրդս Բուշի խաղահրապարակ և կտեսնեմ զարմիկներին:



Լիլիա

Այս իրավիճակի պայմաններում ինձ դուր է գալիս, որ առավոտ շուտ չեմ արթնանում:

Չեմ սիրում Կորոնավիրուսը, որի պատճառով բոլորս փակված ենք տանը:

Առաջին օրն իսկ, որ կարողանայի տնից դուրս գալ կուզեի գնալ Լեզոլանդ:



Էլվիս

Այս իրավիճակի պայմաններում ինձ դուր է գալիս որ ընտանիքիս հետ եմ:

Չեմ սիրում որ որ դպրոց չեմ գնում:

Առաջին օրն իսկ, որ կարողանայի տնից դուրս գալ կուզեի գնալ Վեսթֆիլդ ` Լեզոլի շուկա:




Ծիտը - Յովհաննէս Թումանեան


նկարագարդում արևելահայերէնի երկրորդ դասարանի աշակերտներ



Էյդըն



Ժոզէֆ




Էլեն



Էդի



Սօֆի



Թումաս



Վահան



Մեր Առցանց դասերին Հատուածներ

Փոխադրութեան Միջոցներ

Կը նախնատրես օդանաւով ճամբորդել թէ՞ ոչ նաւով: Ինչո՞ւ

Ի՞նչ միջոցով դպրոց կ'երթաս Ես դպրոց կ'երթամ:

- Հանրակարծով
- Ինքնաշարժով
- Հեծանիւով
- Շոգեկարծով
- Քալելով

աւելի արագ է քան

աւելի սուղ է քան

Ելակ

պանան

խանձոր

դեղձ

Մնուէր

Համերը - Taste

ՍՆՈՒՆՈՒ

տանձ

կերաս

Ճամբորդ

ՍWEET քաղցր

SOOR Թթու

SPICY կծու

BITTER Լեղի

SALTY աղի

ZOOM Համակարգ – PowerPoint-ի Ներկայացում





Հեռավար Ուսուցում

Ինչպես աշխարհի տարբեր երկրներում, այնպես էլ Անգլիայում ուսումնական գործընթացի շարունակությունն ապահովելու նպատակով Գևորգ Թահթայան կիրակնօրյա ազգային վարժարանը նույնպես որոշեց անցնել հեռավար ուսուցման ծրագրին:

Հեռավար ուսուցման ծրագրի ընթացքում 5-րդ դասարանի աշակերտները սկսեցին ավելի խորն ուսումնասիրել Հայ Առաքելական եկեղեցու պատմություն առարկան: Հայոց եկեղեցու շնորհիվ ստեղծվել, պահպանվել ու մեզ են հասել բազմաթիվ մշակութային արժեքներ, ազգային սովորություններ, ծեսեր և տոներ: Անժխտելի է նրա դերը հայ ժողովրդի ազգապահպանման գործում:

Աշակերտները սկսեցին ուսումնասիրել և քննարկել Աստվածաշնչյան տարբեր թեմաներ՝

- «Հին և Նոր Կտակարաններ»,
- «Ադամ և Եվա»,
- «Նոյ նահապետ»,
- «Հայկ և Բել»,
- «Սուրբ Ծնունդ»,
- «Տյառնընդառաջ»,
- «Ծաղկազարդ»,
- «Սուրբ Զատիկ»,
- «Համբարձման տոն»

Այնուհետև երեխաներից յուրաքանչյուրն ընտրելով մեկ թեմա պատրաստեցին հրաշալի պաստառներ: Երեխաները ցուցաբերեցին ակտիվ մասնակցություն, որը շատ գնահատելի է և գովելի:

“Զատիկ” - Էլիոթ 5-րդ դասարան (Տիկ Գայանէ)

Զատիկը Քրիստոսի Սուրբ Հարության տոնն է:

Զատիկին նախորդում է Աւագ շաբաթը: Աւագ շաբաթվա շաբաթ երեկոյան մատուցվում է Քրիստոսի Հարության ճրագալույցի պատարագը, որով վերջանում է Մեծ Պասի շրջանը:

Այն Զատիկ է կոչվել ձմեռվանից գարունը գատվելու առթիվ:

Զատիկ հին հունարերեն նշանակում է անցում, գատում, բաժանում, հեռացում:

Հայերը Զատիկը տոնել են ապրիլ ամսին՝ շատ ավելի վաղ, քան քրիստոնեությունն էր:

Հայկական ավանդույթում Զատիկին հավկիթներով հավկթախաղ են խաղում, որը տեղի է ունենում երկու հոգու միջև:

Կոտրող հավկիթը հաղթող է ճանաչվում և ուտում է կոտրված հավկիթը:

Նաև ավադույթ է Զատիկի հավկիթները ուտել թարխունով, աղով և լավաշով:



Դպրոցն ներս ունինք “Առաջարկներու Տուփ” մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակետները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:



5-րդ դասարանի աշակերտների աշխատանքը



«Ովաննա, որի Դաթի:
Օրինեալ է ան որ Տրոջը
անունով կու գայ:
Ովաննա ի բարձունս»:

Մատթ. 21:9



2 ատիկ

2 ատիկ Յիսուսի օրն է:
Հայոց եկեղեցին միւս եկեղեցիների պէս Զ ըրստոսի
Յարութիւնը կոչում է նաև 2 ատիկ որը նշանակում
է բաժանել որդեւել զատում բաժանում ինչպէս նաև
տոն ուրախութիւն: Խ որիդանշում է Զ ըրստոսի
խաչելութիւնը և մահը և Յարութիւնը:
Ժ որովորական սովորութիւններից են հաւակիթ ներկելը
և հաւակիթ խաղալը:
2 ատիկը կը տօնուի Մարտի ից մինչև Ապրիլ ը որն է մեկ
կիրակի կը փոխի ամէն տարի այս օրերի մէջ:
Մարդիկ 2 ատիկը կ'աւետեն այս խօսքերով:
**Քրիստոս Հարեաւ Ի Մեռելոց Օրինեալ Է
Յարութիւնը Քրիստոսի:**



Յիսուսի Յարութիւնը

Յիսուսի մահից երեք օր յետոյ կանայք գնացին գերեզման, այստեղ
Խուկն ծխելու համար:
Երբ գերեզմանին մօտեցան տեսան որ քարը գլորած է մի կողմ: Այս
որ տեսան շուտ Մարիամ Մագդաղինացին վերադառնում է քաղաք
եւ լուր է տալիս Յիսուսի աշակերտներին, որ Յիսուսի մարմինն այնտեղ
չէ: Իսկ միւս երկու կանայք ներս են մտնում, եւ տեսնում են մի սպիտակ
հագած իրեշտակ, վախենում են եւ զարմանում, իրեշտակը իսկոյն ասում
է, «Մի վախեցե՛ք Յիսուսը այստեղ չէ, նա այլ մեռելներից Յարութիւն անաւ,
իչ ու էք կենդանուկ մեռելների մէջ փնտրում»: Այս երկու կանայք քաղաք
են վերադառնում եւ բոլորին պատմում իրենց տեսած ու լսածը:
Յիսուսի Յարութեան տօնը կոչում է նաեւ 2 ատիկ:

Արևո

Յիսուսի խաչելութիւնը

Յիսուսին ծծելուց յետոյ Նրան մահ դատեցին, Յիսուսին եւ երկու մեղաւորներին տարան Գողգոթա
լեռը եւ անտեղ խաչեցին: Յիսուսը նաեւ իր
դատապարտողներին եւ ասաց «**Հայր ներիր իրենց
որ չեն իմանում թէ ինչ են անում**»: Մեղաւորներից
մէկը Յիսուսին ասաց, «**Դու Քրիստոսը միթէ չէ՞ս,
քեզ եւ մեզ փրկիր**»: Միւսը ասաց «**Յիշիր ինձ քո
արքայութեան մէջ**» Յիսուսը Նրան ասաց «**դու ինձ
հետ դրախտում կը լինես**»:

Յիսուսը խաչի վրայ մահացաւ, զինուորներից մէկը
վստահ լինելու համար, նիզակով իր կողը ծակեց, ջուր
եւ արիւն թափեց:

Լարա Ա

Հեռավար ուսուցում

Մի քանի բարեկամներ, ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ Լոնդոնում, համաճարակի պատճառով մեր վարժարանը նույնպես ստիպված եղավ անցնել հեռավար ուսուցման:

Չնայած բոլոր դժվարություններին մեր ուսուցիչները ջանք չեն խնայում անցկացնել հեռավար դասեր, այն փորձելով դարձնել է լավելի հետաքրքրաշարժ և դյուրին, փոխանցելով աշակերտներին այն բոլոր գիտելիքները, որոնք պետք էր կիրառել այս վերջին ամիսների ընթացքում:

Ուրախությամբ ցանկանում եմ նշել, որ ինչպես մեր դպրոցի բոլոր աշակերտները, այնպես էլ 6-րդ դասարանի աշակերտները, հաճույքով մասնակցում են դասերին և փորձում են ահնարինը դարձնել հնարավոր այս դժվարին ժամանակահատվածում:

Ձեզ ենք ներկայացնում նրանց կատարած աշխատանքները Սուրբ Զատիկի և Ցեղասպանության վերաբերյալ:

1915-1923 թվականների ընթացքում Օսմանյան կայսրության կողմից Թուրքիայում և հարակից շրջաններում իրականացված 1.5 միլիոն էթնիկ հայերի համակարգված զանգվածային սպանությունը և վտարումը: Մեկնարկի ամսաթիվը պայմանականորեն անցկացվում է 1915 թ. Ապրիլի 24-ին: Չոհեբի հիշատակի օրը նշում է ամեն տարի Ապրիլի 24 ին:



Զատիկի տոնը Հիսուս Քրիստոսի հարության տոնն է:

Զատիկը զատուն բառից է, որը նշանակում է բաժանում մեղքերից:

Այդ օրը բոլորը մեղքերի թողություն են ստանում, քանի որ Հիսուս Քրիստոսը զոհվեց իր վրա կրելով բոլոր մարդկության մեղքերը:

Զատիկի խորհրդանիշը ներկած ձուն է, որի կարմիր գույնը խորհրդանշում է Հիսուսի թափած արյունը:

Ըստ հայկական ավանդույթի Զատիկի նախորդ օրը ձու են ներկում իսկ երեկոյան սեղան փռում զանազան զատկական ուտեստներով՝ ձկնեղենով, կանաչեղենով և չամիչով փլավով:

Զատիկի առավոտյան եկեղեցի են գնում մասնակցում պատարագին և միմյանց ասում.

Քրիստոս հարյավ ի մեռելոց

Օրինյալ է հարությունը Քրիստոսի



Շնորհավոր Սուրբ Զատիկ



«Զ» (Արեւմտահայ) Դասարանին Աշխատանքները



Այս տարի, Քլոն և Յասմիկը զարգացուցին իրենց հայերեն խօսակցութեան և գրել-կարդալու հմտութիւնները ոչ միայն հետեւելով դասագիրքին, այլ նաեւ կատարելով անոնց համար հետաքրքրական եւ արդիական նիւթերու շուրջ նախագծեր եւ աշխատանքներ: Անոնց մէջէն ձեզի կը ներկայացնենք մի քանի օրինակներ՝ «Հայկական Խոհանոց – Մարմա», «Հայոց Պատմութիւն – Իմ Հայ Նախնիկիս Կենսագրութիւնը» եւ «Առողջապահութիւն – Ինչպէս Պայքարիլ Թագաժահիրին Դէմ»: Յուսով ենք, որ դուք օգտակար եւ հետաքրքրական տեղեկութիւններ կը գտնէք անոնց աշխատանքներուն մէջ:



Իմ մեծ մեծ մամաս - Թագուհի Գեղիդեան

Իմ մեծ մեծ մամաս Թագուհի Գեղիդեան Ատանա ծնած էր փետրուար 14, 1915-ին: Իր մայրը Միսիս ծնած էր և թուրքերը ամէն ընտանիքը սպանեցին:

Բարի դրացի մը պահեց Թագուհիին մաման եւ օգնեց, որ փախնի Ատանա: Հոն ամուսնացաւ եւ Թագուհին ծնաւ:

Թագուհիին պապան մերաւ, որովհետեւ շատ ցաւալի բաներ տեսաւ: Թագուհին միայն երկու ամսական էր: Թագուհիին նոր պապան կուգեր կոր, որ Լիբանան երթան և փախան: Որովհետեւ շատ աղքատ էին, Թագուհիին նոր պապան թունաւորուեցաւ եւ մերաւ:

Փոխանակ դպրոց երթալու, Թագուհին իր քրոջը և եղբայրներուն հոգ կուտար:

Գիշերը կարկտան կնէր մամային հետ:

Երբ, որ մեծցաւ, Անդրանիկին հետ ամուսնացաւ 1930-ին և վեց զաւակ ունեցաւ: Անդրանիկը շատ դժուար կեանք ունեցաւ: 1982-ին Անդրանիկն մերաւ:

Թէեւ Թագուհին շատ դժուար կեանք ունեցաւ և ընտանիքը կորսնցուց: Բայց 6 զաւակ, 15 թոռնիկ և 32 ծոռնիկ ունեցաւ:

Քլօէ

Իմ Հերոս Նախապապս

Ես պիտի պատմեմ իմ նախապապի մասին, որովհետեւ ան շատ զօրաւոր եւ բարի անձ մըն էր:

Իմ նախապապի անունը Պօղոս Սարգիսեան էր: Ան ծնած էր 1888 թուականին Պաքու քաղաքին մէջ:



Իմ նախապապը կամա-ւորական զինուոր մըն էր եւ կռուեցաւ թուրքերու դէմ արեւելեան ճակատամարտին մէջ:

Իր կեանքի մնացած տարիները անցուց Իրաքի մէջ որտեղ հանդիպաւ իմ նախամամիս եւ հետը ամուսնացաւ:

Ան մահացաւ 1965-ին Պաղդադի մէջ:

Ես շատ հպարտ եմ իմ նախապապով, որովհետեւ ան շատ հայերու կեանքը փրկեց:

Յասմիկ



Հեռավար ուսուցում



Այժմ գտնվում ենք մի այնպիսի առանձնահատուկ իրավիճակում, որ երբևիցե չենք էլ երևակայել: Սակայն օրեցօր ընտելանում ենք մեզ համար շատ անսովոր առօրյային և կազմակերպում մեր օրը:



Այս օրերին անհրաժեշտություն է առաջացել անցնել հեռավար ուսուցման, սակայն դրանից չի փոխվել մեր երեխաների հայեցի մտածողությունն ու հայրենասիրությունը:

7-րդ դասարանի աշակերտները, այս ամբողջ հեռակա ուսուցման ընթացքում, կազմել են տարբեր թեմաներով պաստառներ: “Ցեղասպանության” և “Մայիսյան հաղթանակներ” վերնագրերով պաստառները շատ գնահատելի են և երեխաները ցուցաբերել են ակտիվ մասնակցություն: Այս առիթով դպրոցը վերաբացվելուն պես նրանք անպայման գովասանագրեր կստանան:

Իմ դասարանի աշակերտները գրել են շարադրություն ”Իմ հայկական ոգին” վերնագրով, որի մեջ երեխաներից մեկը նշում է, թե չկա աշխարհում մի ուժ, որ ստիպի մեզ հրաժարվել մեր կրոնից, սահմաններից և մեր հայրենիքից:

Սա խոսում է այն մասին , որ մենք իզուր չենք հաճախում հայկական դպրոց, իզուր չենք ուսուցանում, որ մենք ԿԱՆՔ, ՊԻՏԻ ԼԻՆԵՆՔ ՈՒ ԴԵՌՇԱՏԱՆԱՆՔ






Մայիսը Յադրանակների Ամիս

Ամենայն տեղ մահը մի է մարդ մէկ ազամ պիտ մեռնի
Բայց երանի որ իւր ազգի ազատութեան կգոհի

Մայիս 28, 1918 Հայաստանի
Առաջին Հանրապետութեան
Հիմնադրումը

Մայիս 9
Եռատուն



Մայիս 26-27, 1918
Սարգսրապատի
Ճակատամարտի
Յադրանակը

Յադրանակ
Ֆաշիզմի դէմ
1945

Մայիսի 26, 451
Աւարայրի
Ճակատամարտը



Շուշիի ազատագրումը
1992

Արցախի Ազգային
Բանակի
Ստեղծումը, 1992



Աւարտական դասարանի աշակերտների
զգացմունքները դպրոցի նկատմամբ



“Շնորհակալ եմ իմ Հայոց
Դպրոցի բոլոր
ուսուցիչներին, որ ոչ մի
ջանք չեն խնայել, որ մեզ
Հայերէն սովորեցնեն:”
Ստեֆան

“Ես շատ եմ կարօտելու
իմ Հայոց դպրոցը:”

Վահէ

“Շնորհակալութիւն իմ բոլոր
ուսուցիչներին, ովքեր
տարիներ շարունակ ինձ
ուսուցանել են, յատուկ
շնորհակալութիւն իմ
առաջին ուսուցիչներին, որ
ինձ Հայերէն գրել և կարդալ
են սովորեցրել:”

Ալեքս

“Կարօտելու եմ իմ
տարիները Գեորգ Թահթա
Հայոց Դպրոցում, ինչպէս
նաև իմ դասընկերներին և
ուսուցիչներին: Շնորհակալ
եմ իմ բոլոր ուսուցիչներին,
որ մեզ սովորեցրել են մեր
մայրենի լեզուն և Հայոց
պատմութիւնը:”

Սէլին

“Ես հպարտ եմ, որ իմ
Թահթայեան Հայոց
Դպրոցում սովորել եմ
մեր հարուստ մշակոյթի
մասին:”

Անդրէ

“Ես ցանկանում եմ
շնորհակալութիւն յայտնել
իմ բոլոր ուսուցիչներին և
Տիկին Թաթուլեանին: Ես
շատ լաւ յիշողութիւններ
ունեմ՝ սկսած երեք
տարեկանից մինչև օրս:
Անչափ կկարօտեմ բոլորին:”
Քրիստինէ





«Թ» (Արեւմտահայ) Դասարանին Աշխատանքները

Այս տարի Նոէին հետ աշխատեցանք բարելաւել հայերէնի բառապաշարն ու քերականութիւնը: Այս նպատակով՝ օգտուեցանք անգլիական դպրոցներուն մէջ գործածուող շատ հետաքրքրական եւ գուարճալի կրթական ծրագրէ մը, որ հարմարեցուած էր աշակերտին կարիքներուն. ան կը կոչուի «Quizlet»: Նոէն իր մասնակցութիւնը բերաւ Ամանորի տօնավաճառին՝ օգնելով դպրոցի մանուկ աշակերտներուն, որպէսզի զարդարեն կաղանդի բլիթները եւ կարկանդակները: Ան նաեւ մասնակցեցաւ վարժարանիս Վարդանանցի եւ ամավերջի հանդէսներուն: Վերջապէս, Նոէն հետագոտեց եւ պատրաստեց իր նախնիկին կենսագրութիւնը, որ վերապրած էր հայոց ցեղասպանութիւնը:

Իմ մեծ-մեծ մեծ մայրիկս՝ Մարիամ Անուշեան



1915 թուականն էր: Երիտասարդ Մարիամ Անուշեան՝ իմ մեծ-մեծ մեծ մայրս իր բազմամարդ ընտանիքին եւ երեք քոյր-եղբայրներուն հետ կ'ապրէր Սասունի մէջ: Օր մը, Օսմանեան զինուորները խուժեցին անոնց տունը: Մայրը Մարիամին պահեց հիւրասենեակին բազմոցին ետեւ եւ վազեց դուրս՝ մեծ հօր եւ մեծ մօրը փնտրելու: Զինուորները գլխատեցին անոր ինչպէս նաեւ իր բոլոր ընտանիքին: Մարիամը լուռ եւ սարսափած մնաց բազմոցին ետեւը: Տունը խուզարկելէ ետք, զինուորները հեռացան եւ Մարիամը մինակ եւ վախերու մէջ մնաց մինչեւ մթննալը: Ան որոշեց փախիլ դէպի լեռները, ուր հանդիպեցաւ այլ հայերու:

Անոնք խմբով ստիպուեցան Տէր Զորի անապատը կտրել եւ փախան Սիրիա: Աքսորի ճամբուն Մարիամը ծանօթացաւ Գրիգորին՝ իր ապագայ ամուսնուն: Մէկ ու կէս տարի ճամբորդութենէ ետք, շատ տարիքաւորներ մահացան բայց Մարիամն ու Գրիգորը հասան Սիրիա 1916ին եւ որբանոց դրուեցան: 1918ին Գրիգորն ու Մարիամը Լիբանան տեղափոխուեցան, ուր տուն մը շինեցին եւ ունեցան հինգ զաւակ՝ հայ ազգը շատացնելով: Մարիամը երկար կեանք ապրեցաւ եւ մահացաւ 1995ին՝ 93 տարեկանին: Մարիամը շատ լուռ եւ զօրաւոր կին եղած է. Ան գիտէր աւանդական գորգագործութեան արհեստը եւ չնայած երիտասարդ տարիքէն խուլ մնացած էր, բայց կրնար բոլորին հասկնալ բերանի շարժումներուն հետեւելով:

The year was 1915 my young great-great-grandmother, Mariam Anoushian was living with her large family which included her three siblings in Sasoon when the Ottoman army barged into her house. As they did, her mum hid her behind a couch in the living room and when she left to find the grandparents she was beheaded along with the rest of the family. Mariam was left scared in silence behind the couch. After searching the house the soldiers left leaving her alone; she sat there scared until night time when she went into the mountains eventually meeting up with other Armenians. Eventually the group was forced to cross the Der-Zor desert to escape to Syria; during the journey Mariam met Krikor her future husband. After 1 ½ years of travelling many elderly died but they were finally at Mariam and Krikor moved to Lebanon in 1918 where they built a house and had five kids to increase the Armenian population. Mariam died in 1995 at the age of 93.

Mariam was a quiet and strong woman. She mastered the traditional Armenian rug weaving craft and despite having been left deaf from a young age, she was able to understand everyone through lip-reading.

Noe T





Յաղթանակի Օրւան Նւիրւած Հեռավար Հանդես

Մայիսի 10-ին վարժարանում իր նախադէպը չունեցող պայմաններում օգտուելով ZOOM համակարգի հեռավար ուսուցման հարթակից Գ Թախթայեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանը տօնեց Յաղթանակի օրը:

Առաւօտեան ժամը 11-ին, բոլոր աշակերտները իրենց ծնողների հետ ZOOM համակարգի միջոցով միացան մասնակցելու այս տօնակատարութեանը:

Հոգաբարձուներ Հայկ Արմաղանեանը և Միլվա Դիլանչեանը ամենայն ճշգրտութեամբ ստուգում էին բոլոր աշակերտների մուտքը:


Ողջոյնի և բացման խօսքով հանդես եկաւ հոգաբարձու Կարօ Կարաբէյէքեանը, նա ներկայացրեց նաև հանդեսի ծրագիրը:

Հանդեսը սկսեց Հայաստանի Հանրապետութեան օրհներգով, այնուհետև Բրիտանահայ համայնքի հոգևոր առաջնորդ՝ գերաշնորհ սրբազան հայր Հովակիմ Մանուկեանը շնորհաւորելով բոլորին Յաղթանակի տօնի առթիւ՝ ներկայացրեց Եռատօնի դերն ու նշանակութիւնը, Սրբազանի խօսքն աւարտեց Տէրունակ աղօթքով:

Այնուհետև Վարժարանի տնօրինուհի տիկին Ռուզաննա Թաթուլեանը ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրւայ խորհուրդը և շնորհաւորեց բոլորին Շուշիի ազատագրման 28-երորդ տարեդարձի և Արցախի բանակի կազմաւորման տարեդարձի առթիւ: Հանդեսի ընթացքում 9-րդ դասարանի աշակերտները արտասանեցին Յովի Շիրազի «Իմ Սուրբ Հայրենիք» բանաստեղծութիւնը, իսկ նախակրթարանից մինչև 8-րդ դասարանների աշակերտները ներկայացրին Պարոյր Սևակի « Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում» բանաստեղծութիւնը, իւրաքանչիւր աշակերտ արտասանեց մէկական տող իր տարիքին համապատասխան:

Շատ գեղեցիկ և յուզիչ հանդես էր: Հանդեսի տեսագրութիւնը պատրաստել էր վարժարանի շրջանաւարտ այժմ ուսուցչուհու օգնական Օրի.Լիա Գիւլիսանճեանը, որի համար իրեն յատուկ շնորհակալութիւն ենք յայտնում:

Շնորհակալութիւն բոլորին, որ այս դժուարին պայմաններում սիրով և նւիրում կարողացան պատրաստել և մասնակցել այս գեղեցիկ ձեռնարկին:



Յաղթանակի Օրան Նվիրած Հեռավար Հանդես



On 10th May 2020 the K Tahta Armenian Community Sunday School used the ZOOM video conferencing tool and organised a virtual celebration of the Liberation of Shushi's victory day.

At 11.00 in the morning all K Tahta School students, with their families, virtually joined together to celebrate this occasion.

Governors Haig Armaghian and Silva Dilanchian were scrutinising to make sure that it was only the school's children with their parents and guardians who were participating in this unique event.

Governor, Garo Karabeyekian, greeted and welcomed all and introduced the programme of the day.

The assembly commenced with singing the Armenian National Anthem followed by His Grace Bishop Hovakim Manukyan greeting and congratulating all on this occasion and explained its significance for all Armenians throughout the world, and concluded with his blessings and prayers.

The Bishop's blessings were followed by the School Headteacher Mrs. Ruzanna Tatulyan's greetings and the introduction of the days programme. She then congratulated everyone on the Liberation of Shushi's victory day, stating that this year we are celebrating the 28th anniversary of Shushi's liberation and the formation of Artsakh's army.

During the assembly, year 9 students recited Hovhannes Shiraz's poem "My Holy Mother Land" and starting from pre-school up to year 8 the students recited and presented Paruyr Sevak's "We are few, but we are called Armenians". Each student consecutively recited one line from this famous poem.

The arrangements of the continuous video recitation by the students was organised by one of the School Teacher Mrs. Lena and her daughter, Leah Kulcanjians who is a former student and now a Teaching Assistant in the school, the school is very grateful to both for their efforts.



Առաջին Հանրապետության Հռչակման 102-րդ Տարեդարձը

Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի և առաջին հանրապետության հռչակման 102-րդ տարեդարձը Մայիսի 31-ին Վարժարանում հեռավար տոնեցինք Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի և առաջին հանրապետության հռչակման 102-րդ տարեդարձը:

Առաւօտեան Տէրունական աղօթքից և ՀՀ Օրհներգից յետոյ, վարժարանի տնօրինուհի Տիկին Ռուզաննա Թաթուլեանը շնորհաւորեց բոլորին Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի և առաջին հանրապետության հռչակման 102-րդ տարեդարձի առթիւ. Նա ներկայացրեց նաև, որ այս հերոսամարտերի յաղթանակների շնորհիւ Արևելեան Հայաստանը փրկւեց թուրքական զաւթումից և ցեղասպանութիւնից ու 1918 -ի

մայիս 28-ին Արագածի շուրջը տարածւած այդ մի փոքր հողակտորի վրայ 6-դարեայ պետականութիւնը կորցրած Հայ ժողովուրդը հնարաւորութիւն ունեցաւ վերականգնել Հայոց պետականութիւնը, հռչակւեց Հայաստանի անկախ հանրապետութիւնը:

Այնուհետև ցուցադրւեց տեսաերիզ այս յաղթանակների մասին:

Հանդէսը եզրափակւեց Բրիտանահայ Համայնքային խորհրդի ատենապետ Պարոն Արմանդ Աբրամեանի ելոյթով: Նա շատ գեղեցիկ ներկայացրեց Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի յաղթանակների դերն ու նշանակութիւնը Հայոց պետականութեան վերականգման և Հայաստանի անկախ հանրապետութեան ստեղծման գործում:





Commemorating 1st Republic of Armenia

On May 31, we celebrated the 102nd anniversary of the proclamation of the first Republic and the heroic battles of Sardarapat, Bash Aparan and Gharakilisa.

After the Lord's Prayer and the National Anthem, the school's headteacher Mrs. Ruzanna Tatulian congratulated everyone on the 102nd anniversary of the proclamation of the first republic and the heroic battles of Sardarapat, Bash Aparan, Gharakilisa. She mentioned that thanks to the victories of these heroic battles, Eastern Armenia was saved from Turkish occupation and genocide. On May 28, 1918, the Armenian people, who lost 6 years of statehood on that small plot of land around Aragats, had the opportunity to restore Armenian statehood and declare the independence of Armenia.

Then a video about these victories was shown.

The event concluded with a speech by Mr. Armand Abramian, Chairman of the Armenian Community Council of UK who brilliantly presented the role and significance of the victories of the heroic battles of Sardarapat, Bash Aparan, Gharakilisa in the restoration of the Armenian statehood and the creation of an independent republic of Armenia



Հայրերի օր

Յունիսի 21-ին տօնեցինք հայրերի օրը և մանկապարտեզի ու նախակրթարանների աշակերտների ամավերջի հանդեսը: Մանկապարտեզի ու նախակրթարանների աշակերտներն իրենց գեղեցիկ ելույթներով շնորհաւորեցին հայրիկներին:


Այնուհետև մանկապարտեզի աշակերտները արտասանեցին “Արև, արև եկ,եկ”, “Իմ գնդակ” բանաստեղծությունները և երգեցին “Եղնիկ”, “Նապաստակ” երգերը:

Նախակրթարան Ա դասարանների աշակերտները շատ գեղեցիկ ներկայացրին “Մեր փոքրիկ նկարիչները” պատմությունը: Արևմտահայերեն բաժնի փոքրիկները արտասանեցին Համո Սահեանի “Հայ Լեզու”

բանաստեղծությունը ինչպես նաև յառաջներ Սիլվա Կապուտիկեանի “Խօսք իմ որդուն” բանաստեղծությունից և “Հայ եմ ես” երգը:

Նախակրթարան Բ դասարանների աշակերտները շատ գեղեցիկ ներկայացրին “Հրաժեշտ այբբենարանին” ոտանաւորների շարքը:

Հանդեսն անցավ շատ յուզիչ մթնոլորտում: Հեռավար հանդեսի տեխնիկական մասերի համար շնորհակալութիւն մեր սիրելի շրջանաւարտներ Լևոն Մինասեանին (նախկին ուսուցչի օգնական), Վանուհի Պետրոսեանին (այժմ ուսուցչի օգնական), Լիա Գիւլիսանճեանին (այժմ ուսուցչի օգնական):



Ամսապերջի Հանդես – End of Year Performance



On 5th July 2020 the K Tahta Armenian Community Sunday School used the ZOOM video conferencing tool and organised a virtual celebration of the successful finishing of the school's 2019-2020 academic year.

This year's, the end of year performance was dedicated to our Homeland.

At 11:00 in the morning all K Tahta School students and their families joined to celebrate the occasion, with the help of ZOOM platform". Governor, Garo Karabekian, greeted and welcomed all and introduced the programme.

The assembly commenced with the singing of the Armenian National Anthem followed by a speech by Mr Hratch Kuyumjian on behalf of ACC of GB.

He greeted and congratulated all on the occasion of the year end and emphasised the significant role of the K Tahta Armenian Community Sunday School specifically for the Armenian Community in London.


The Head teacher, Mrs. Ruzanna Tatulyan, then greeted everyone and congratulated the graduates, all students,

parents and teachers for successfully finishing the academic year. During the assembly, pupils from year 1 up to year 8 recited "National song-Azgayin erge" by Avetik Isahakyan. The Western Armenian classes presented "Nubar-Nubar" by Komitas and "Hay em yes" songs and a story on the subject "How Corona virus changed their lives". The graduates recited "Es im Anoush Hayastani" poem by Egishe Charents.

Then Chargé d'affaires of Republic of Armenia Gagik Kirakosyan congratulated everyone specially the graduates for successfully finishing school in this academic year.

The Assembly concluded by His Grace Bishop Hovakim Manukyan's greeting and congratulating all on this occasion.

The arrangements of the continuous video recitation by the students was organised by school teacher Mrs. Lena Kulkanjian, and her daughter Leah Kulkanjian who is a former student and now an assistant teacher. The school is very grateful to both for their efforts.



Feedback from Parents and Students

Digin Anna jan we can't thank you all enough for all the hard work and dedication you've shown for our little ones. They sure have learnt a lot and us parents are very grateful! We all will miss you so much and can't wait to see you in September.

Vanouhi jan, we can't thank you enough for all your hard work and support to our little ones. We love you and will miss you so much! Ella surly has learnt so much this last year! So grateful to you all!

Thank you Vanouhi and Digin Anna jan.... you have all been amazing during this time and I feel Lucia's Armenian letters and speaking as well as the confidence on video calls has really grown. Thanks for all your support.

Մեր շատ սիրելի Տիկին Աննա և Վանուհի, անչափ շնորհակալ ենք Ձեզ՝ Ձեր ոգևորված և սիրաշատ աշխատանքի համար: Մենք իսկապես գահատում ենք ձեր պատրաստակամությունը՝ երեխաների ուսումը շարունակելու այս դժվար պայմաններում: Շատ սիրում ենք և կարող ենք:

Thank you to Vanouhi, Ms Anna and Janet for always putting our children first, for going above and beyond to help the new generation to learn our wonderful Armenian culture, language, history and most of all the community. Without your efforts we would never be able to become part of a big Armenian family far from home. Your love for children has no limits. Stay healthy and blessed.....

Digin Anna and Vanouhi, thank you so much for your hard work, care and love which you showed to our kids in this difficult situation. We are very grateful to you for being our children's first Armenian language teachers. Also a thank you to Digin Janet and Christineh for all the love, support and help they showed to our kids too. God bless you all, we will miss you. Hope to see you all in September, we love you.

Հարգելի Մարինե, թոյլ տվեք շնորհակալությունս և երախտագիտությունս հայտնել Ձեզ, ձեր կատարած դժվար և պատասխանատու գործի համար: Վստահ եմ, որ ինչ-որ ուսուցանել էք մեր երեխաներին՝ ամբողջ կյանքում կուղեկցի նրանց: Սիրով՝ Աննա
Շատ շնորհակալ ենք Տիկին Արաքսյա, Ձեզ հետ շատ հաճելի էր աշխատել, էլենը մեծ հաճույքով էր Ձեզ հետ դաս անում, առողջ մնացեք, հանգիստ արձակուրդ:
Էլեն Հակոբյանի ծնող

Dear Tikin Arax,

Thank you so much for teaching Vahan this year. He has really enjoyed being in your class. You have been very creative, flexible and accommodating throughout the year, and particularly during the past few months. Going above and beyond to help Vahan to feel part of the Armenian community through the WhatsApp lessons and virtual assemblies. Vahan always looked forward to his lessons with you. We are very grateful! Wishing you a lovely summer and hope to see you in September!

Վահան Յարութիւնեանի ծնող

Հարգելի տիկին Անուշ, շատ շնորհակալ եմ Ձեզ, Ձեր կատարած դժվար աշխատանքի համար: Մայան այս ընթացքում բավականին առաջընթաց ունեցավ և ամենակարևորը, իհարկե, երբեմն մի քիչ դժվարությանը, բայց հիմնականում ուրախ է, որ հայերեն է սովորում: Ցանկանում եմ ձեզ անսահման առողջություն և համբերություն՝ ապագա սերունդներին կրթելու համար: Աննա և Մայա Մայքլ

Տիկին Անուշ, անչափ շնորհակալ ենք Ձեր նվիրաբե րաշխատանքի, հոգատարության և միշտ բարձր տրամադրության համար: Ձեր շնորհիվ Մայան, նաև մյուս բոլոր բալիկները, շատ սիրով սովորում են հայոց լեզուն: Սա շատ կարևոր է, նամանավանդ մեզ նման օտարության մեջ ապրողների համար: Մենք բոլորս Ձեզ շատ սիրում, կարոտում և գնահատում ենք: Ուզում եմ նաև շնորհակալություն հայտնել տիկին Ռուզանին, դպրոցը շատ լավ կազմակերպելու համար: Մայա և ծնողներ

Շնորհակալ ենք Ձեզ տիկին Անուշ: Ձեր նվիրվածությունն ու համբերությունը, հատկապես այս վերջին չորս ամիսների ընթացքում, հիանալի են: Ահարոնը շարունակել է սովորել և սիրել հայկական դասերը: Աստված Ձեզ տա ուժ ու կարողութիւն, որ շարունակեք երեխաներին հայոց լեզուն սովորեցնել:

Ահարոն և Տեր և Տիկին Ասդուրեան:

Անչափ շնորհակալ ենք Ձեզ՝ մեր սիրելի ուսուցչուհի Տիկին Անուշ, Ձեր նվիրված և սիրառատ աշխատանքի համար այս դժվարին պայմաններում: Դուք իսկապես անմնացող նվիրումով եք կատարում ձեր աշխատանքը, որը վայելում են Ձեր բոլոր աշակերտները:

Մենք անչափ գնահատում ենք այդ ամենը:

Սիրով Դավիթ և Դավիթի ծնողներ

Սիրելի Տիկին Անուշ ջան, հոգաչափ շնորհակալ եմ Ձեր կատարած Սուրբ և ազգանվեր աշխատանքի համար, որի շնորհիվ մեր երեխաները տառաճանաչ են: Շնորհակալություն Ձեր ջերմության համար, որ փոխանցում եք մեր երեխաներին: Դավիթը այս ընթացքում շատ առաջընթաց ունեցավ և ավելի սիրով է դասերը սովորում: Շնորհակալություն Ձեր մեծ ջանքերի և նվիրվածության համար:
Սիրով՝ Մարինե և Դավիթ

Digin Anush, I honestly can't thank you enough for all your support this year. I know Alex is hard work and we are so appreciative of what you do for us. You really are the best teacher we have ever had Thank you so much for being an amazing teacher. We are lucky to have you and excited to spend another year in your class and treasure what you do for our babies.
Have a great summer.
Tina and Alexandria

Marianna, Noe's Teacher, has been very helpful & understanding of Noe's particular needs & has been flexibly creative in accommodating Noe to her schedule.
Noe has really enjoyed his time with Marianna, appreciated her teaching skills & she really has made a difference ; she is very humane & sensitive: he will miss her.
Noe Topalian

“ Սիրելի տիկին Թամար, վարձքդ կատար - Լավ մնացեք ”. Ստեֆան և Սիլվա

Dear Digin Lena,
Thank you for giving me the opportunity to continue studying Armenian even during these strange times! I have been enjoying these virtual lessons (but not as much as face to face lessons at school). Zoom lessons are not perfect as sometimes there is a lag and we can't see or hear well, but most of the time it is fine. I have benefitted from the reading, writing and speaking exercises you have set for me each week. It is important to do the work together with a teacher rather than try to do it on my own at home. I have also enjoyed seeing my friend's faces and hearing their voices and I look forward to meeting up with them again when the school reopens.
Hovan



Teachers' Meeting



Governors' Meeting

Յայտարարութիւն

Գ. Թահթեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանում դասաւանդում է Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն արևմտահայերէն և արևելահայերէն (դասական և հայաստանեան ուղղագրութեամբ), մանկապարտէզից մինչև իններորդ դասարաններում:

Դպրոցում ունենք չափահաս օտարախօսների համար արևելահայերէն եւ արևմտահայերէն դասարաններ:

Դասաւանդման ժամերն են կիրակի ժամը 10:30 - ից մինչև 2:00-ը:

2020-2021 ուսումնական տարւայ դասերը սկսում են սեպտեմբերի 13-ին:

Լրացուցիչ տեղեկութիւնների և արձանագրութիւնների համար հրաւիրում ենք դպրոց, որի հասցէն է՝

Twyford Church of England School, Twyford Crescent, Acton, London W3 9PP.

Հեռախօս. 0044 (0) 785 483 8073

Դպրոցի մասին տեղեկութիւններ կարող էք ստանալ դպրոցի Վեբ Կայքից, որի հասցէն է՝

<http://www.armenianschool.org.uk>

Արձանագրելու համար կարող էք օգտուել նաև դպրոցի էլեկտրոնային հասցէից՝
info@armenianschool.org.uk

Յարգանքով՝

Գ. Թահթեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի Հոգաբարձութիւն եւ Տնօրինութիւն.

* * *

K. Tahta Armenian Community Sunday School Classes are held every Sunday from 10:30a.m. to 2:00p.m. at

Twyford Church of England School, Twyford Crescent, Acton, London W3 9PP.

Tel: 0044 (0) 785 483 8073

The Sunday School offers parallel classes both Eastern and Western Armenian to pupils aged between 3 and 16 years old, and it is composed of the following three sections: (1) Nursery Section (two years), (2) Pre-academic Section (two years), and (3) Academic Section (nine years). Classes are also offered to adults wishing to learn either Eastern or Western Armenian.

The Sunday School's curriculum covers various aspects of the Armenian language, namely reading, writing, conversation and grammar. Pupils are also taught about important events in the Armenian history, and they learn Armenian songs and dances.

School year 2020-2021 starts on 13 September.

For more information about the K. Tahta Armenian Community Sunday School, please visit our website:

<http://www.armenianschool.org.uk>

To contact us, please email to:

info@armenianschool.org.uk

armenianschool@hotmail.co.uk

Yours sincerely,

The Governors and Headteacher of K.Tahta Community Sunday School

2020-2021 Տարեշրջան



Առաջին եռամսեակ 13 Սեպտ. 2020 – 13 Դեկտ. 2020 Term I 13 September 2020 – 13 December 2020	
13 Սեպտեմբեր 13 September	Վերամուտ Back to school
18 Հոկտեմբեր 18 October	Մշակույթի Օր - Թարգմանչաց Տոն Culture Day
25 Հոկտեմբեր 25 October	Արձակուրդ Half-Term Break
15 Նոյեմբեր 15 November	Ծնողական Ընդհանուր Ժողով Annual Parents' Meeting
13 Դեկտեմբեր 13 December	Նոր Տարուայ Հանդես New Year's Celebration
13 Դեկտեմբեր 13 December	Եռամսեակի վերջին օրը Last Day of Term
Երկրորդ եռամսեակ 10 Յունուար 2021 – 21 Մարտ 2021 Term II 10 January 2021 – 21 March 2021	
7 Փետրուար 7 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
14 Փետրուար 14 February	Վարդանանց Տոն St Vartan's Day
21 Փետրուար 21 February	Արձակուրդ Half-Term Break
21 Մարտ 21 March	Մայրերու Օր Mothers' Day
21 Մարտ 21 March	Ջատկուայ Հանդես Easter Celebration
Երրորդ եռամսեակ 18 Ապրիլ 2021 – 4 Յուլիս 2021 Term III 18 April 2021 – 4 July 2021	
9 Մայիս 9 May	Աշակերտական գիտելիքներու մրցում Quiz for students
23 Մայիս 23 May	Մարզական Օր Sports' Day
30 Մայիս 30 May	Արձակուրդ Half-Term Break
20 Յունիս 20 June	Դաշտահանդես School BBQ
4 Յուլիս 4 July	Ամավերջի Հանդես End of Year Assembly

Խմբագիրներ՝ Ուսուցչակազմ եւ Տնօրենուհի
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերեն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիլյանճեան